

վրայ ըրած ճնշումն անտանելի ըրին հազարաւոր հայ ընտանեաց այլ եւս հայրենիք մնալն, եւ ասոնք ստիպեցան պանդխտութեան դաւազանը ձեռք առնուլ, հայրենի երգին ընդ միշտ կոնակ դարձընել, եւ ուրիշ խաղաղագոյն երկիրներ փնտռել, ուր կարենան ազատութեամբ իրենց հայրենաւանդ սկզբանց համեմատ ղԱստուած պաշտել:

Հայք երբ Մոլտաւիա եկան, լաւ ընդունելութիւն գտան: Այն ժամանակի իշխանն Աղեքսադր Բարի՝ իրենց եօթը քաղաք ցուցուց ի բնակութիւն, եւ նաեւ շատ արտօնութիւններ շնորհեց իրենց, ի մէջ այլոց նաեւ՝ — այն ժամանակի դաղթականական քաղաքականութեան համեմատ, — իրենց դաղթականութեան սեպհական վարչութիւն տուաւ, այն է՝ Հայ Scholtuzներ (Schultheise⁴⁸), ինչպէս Թրանսիլվանիոյ Սամոշույվարի (Կեռլա = Հայաքաղաք) Հայերն ցայսօր ունին⁴⁹, ուր եւ երկրատնտեսութիւնն, արջառաբուծութիւնն եւ ամէն առուտունն բոլորովին իրենց ձեռքն առած են⁵⁰: Սակայն Հայք ինչպէս նաեւ Հրեայք, հին մոլտաւեան իրաւանց համեմատ, իրաւունք չունէին մնաւաճառանոց, պանդոկ եւ հացագործարան ունենալ, եւ ոչ ալ կալուած, ինչպէս՝ արտ, ջաղացք, մեղուանոց եւ տուն շինելու երկիրներ եւ այլն⁵¹, այլ զասոնք անդրէնածիններէն կըրնային միայն վարձել:

Սակայն կրօնական իրաց մէջ ապահովութիւն ունէին կատարեալ ազատութեան⁵², եւ